



Հայերեն տպած առաջին գիրքը եւ հայոց առաջին տպարանը.

Անմահ Գուսեմբերգի մեծ գիւտից 57 տարի յետոյ առաջին անգամ հայերէն տառերով ու հայոց լեզուով գիրք տպւեց:

Այդ գիրքը կոչուում էր «Պար-

ել այդ օրացոյցի մէջ կար «Երազահան» և նման բաներ:


Ճիշտ է, հայերը, որ այդ միջոցին սոսկալի թշուառ դրութեան մէջ էին, այնքան սէր ունէին դէ-



Առաջին սպւած գրքի՝ «Պարգասումարի» երեսները.

զատումար» և դա ոչ այլ ինչ էր, պի ուսումնս ու գիրքը, որ շատ-եթէ ոչ մի օրացոյց, որ ցոյց էր շատ մեծ ազգերից առաջ ընկան տալիս եկեղեցական տօները, բայց տպագրութեան գործում (ուսե-որովհետև այն ժամանակայ հայ-րէն առաջին տպւած գիրքը լոյս-յերը դեռ շատ տգէտ էին ու հա-է տեսել 52 տարի յետոյ քան հայ-լատում էին ամեն տեսակ նա-տպագրւած գիրքը): Բայց դրժ-խապաշարմունքների, դրա համար բախտաբար յայտնի չէ, թէ ով

էր այդ առաջին հայ գիրքը տը-
պողը: Չրգխտենք՝ ով էր առաջին
անգամ հայ տառ ձուլողը ու հայ
գիրք տպողը, բայց մենք այսօր,
400 տարի յետոյ, շնորհակալու-
թեան զգացմունքով պիտի ցան-
կանանք, որ անյայտ չըմնայ մեր
մտքի ճանապարհը բաց անողի
պանծալի անունը: Եւ այդ, մեզ
համար, պաշտելի մարդու ոչ միայն
անունը չըգիտենք, այլ ի՞նչ ազգից
լինելն էլ չըգիտենք. որովհետեւ
«Պարզատու մար»-ը տպւել է Վե-



«Մեղսապարս Յակոբի» սպած գրքերի
սպանիօր.

նետիկում, Եւրոպայի մի ծայ-
րում, շատ հեռու մեր երկրից-
հայութեան կենդրոնից: Միայն
յաջորդ 1513 թւին նոյն տեղը
տպւած ուրիշ գրքերում յիշուում
է Յակոբ անունով մի մարդ, որ
ասում է, թէ իր մեղքերին թո-
ղութիւն խնդրեն Աստուծոց նրանք,
ովքեր կը կարդան այս գրքերը:
Նա իրան անւանում է «Մեղսա-
պարտ Յակոբ»: Հաւանական է որ
հէնց այս Յակոբն էր և առաջին
գրքի տպագրիչը, որովհետեւ երկու

գրքերի վրա միևնոյն տպանիշն է
գրոււած: Արդեօք այս Յակոբը
տպարանատէր էր, հրատարակիչ
էր, թէ՛ միայն ցոյց էր տալիս
Վենետիկցիներին հայերէն տա-
ռերի ձևը, չըգիտենք: Շատ վաղ
է եղել ու շատ հեռու մեզանից,
յիշատակութիւն էլ չի մնացել:

Բայց ինչո՞ւ մեր հայրենիքից
այդքան հեռու տեղ տպւեց ա-
ռաջին գիրքը:— Որովհետեւ այդ
ժամանակ մեր աշխարհը մի սոս-
կալի աւերակ էր. թուրքամենների
ու մոնղոլների արշաւանքները
երկիրը դարձրել էին մի անապատ,
ուր ոչ ճանապարհկար, ոչ ազատ
գնալ-գալ, ոչ կեանքի ու ստաց-
ւածքի ապահովութիւն: Երկար
նեղութիւններից ու հալածանքնե-
րից մարդիկ վայրենացել էին,
գիրն ու գրականութիւնը կորել,
անհետացել: Պարզ է, որ այդպի-
սի երկրում տպարան հիմնել ու
գիրք տպւել չէր կարող: Բայց ո-
րովհետեւ. Մեսրոպի տնկած ծա-
ւից այստեղ-այնտեղ հատ ու կտոր
ծիլեր կային դեռ, բուն երկրից
դուրս եղող, գաղթական հայերը
գոնէ լուսաւորութեան ճանապար-
հը բաց արին ու իրենց թշւառ
հայրենակիցներին տպւած գիրք
տւին:

52 տարի է անցնում այնուհետեւ,
բայց էլ հայերէն գիրք չի տըպ-
ւում: Եւ 1565 թւին, նորից Վե-
նետիկում տպւում է Սաղմոսը այս



Արգար դպիր

անգամ թէ հայ մարդու ձեռքով, թէ հայ տպարանում: Այս մարդը թոքատեցի Արգար դպիրն էր, որ հիմնեց առաջին հայ տպարանը: Այժմ հեշտ է ասել «տպարան հիմնեց», բայց այն ժամանակ, հայրենիքից այդքան հեռու, մի օտար երկրում հայ տառեր փորագրել և ձուլելը շատ դժվար գործ էր: Այդ ժամանակ, իրենք Եւրոպացիք էլ դեռ շատ դժվարութեամբ ու նեղութիւններով էին տպարան հիմնում, զիրք տպում, որովհետև այդ արհեստը դեռ նոր էր, կատարելագործւած չէր, ուր մնաց թէ հայերը, որ խաւար Ասիայի մի կորած-մոլորած անկիւնում հեծում էին բռնաւորների լծի տակ:

Բայց Արգարը վենետիկում տպարան հիմնելով՝ այնտեղ էլ չը մնաց. երկու տարի յետոյ՝ նա իր գործին օգնական որդի Սուլթանշահի հետ իր տպարանը տեղափոխեց Կ. Պօլիս, որովհետև Հոռմի պապերը չէին թողնի, որ հայոց դաւանութեամբ ու հայոց եկեղեցու համար իրենց երկրում գրքեր տպւեն:

Դժբախտաբար այս Արգարի մասին էլ շատ բան չըգիտենք մենք: Յայտնի է, որ նա թոքատեցի էր, մեծ ժողովրդականութիւն ունէր. ասում են շատ նշանաւոր ծագումն ունեցող, նոյն իսկ թագաւորական (Արծրունի) ցեղից էր:

Ժամանակի Միքայէլ կաթողիկոսը նրան ուղարկել էր Հռովմ պա-



Սուլթանշահ, Արգարի որդի

պին խնդրելու, որ նա օգնի բռնանակալների լծի տակ տանջւող յէլ կաթողիկոսն է նրան ասած քրիստոնէաներին: Երբ այս գործը անաջող անցաւ, խելօք ու հեռատես Աբգարը, որպէսզի զուր անել էլ որ լինի, Աբգար դպիրն



Ի թվականիս. Հայոց. Թ. Ժ. Գ. ամինես թոխաթ ցիաբգարդպիրս խնդրեցի զայննորդիրս. Ի հոռոմ Ի պետրոս փափունն և երեստ հրամ անշինելու. բարեխաւսութե այսկարտ Ի սալացսեայս. Եպկսի և իմգրայս իտ սուլտան շայորդոյ:

Աբգար դպիրն ու իր որդին իրենց սպամ գիրքը՝ «Սաղմոսը» մասուցանում են պապին (1565)

տեղը եկած չը լինի Եւրոպա, տրայն մարդն էր, որ առաջին հայ սպարան հիմնեց, որով շատ աւելի տպարանը հիմնեց և այժմ, երբ մեծ օգնութիւն արաւ հայերին, ամբողջ հայութիւնը տօնում է քան թէ Հոռոմի պապը կարող էր այս մեծ ու «համազգային» տօ-

նը, մանուկ ընթերցողներ, թող ձեր սրտի մէջ ամենամեծ հայ մարդու՝ Ս. Մեսրոպի անւան կողքին անջնջելի տառերով դրոշմւի Յակոբի և Արզարի անուններն էլ:

Արգար դպրից յետոյ նորից անցնում են տարիներ և նոյն վեհատիկում երևում է մի հայաստանցի քահանայ, Յովհաննէս Տէրգնցի և իր որդու հետ տպում է «Սարմուսարան» գիրքը 1587 թ.:

Քահանաները և վարդապետները, և ծերերը և պատանիները մինչև անգամ խոհարարը անմասն չը մնաց: Ամեն ինչ իրենք շինեցին—և՛ մամուլը, և՛ տառերը: Ոգևորութիւնը մեծ էր:

Հետզհետէ տպարանները բազմացան և հիմա չը կայ մի հայաբնակ քիչ թէ շատ մեծ քաղաք, որտեղ և հայերէն գրքեր և լրագիրներ չը տպեն. ու



Յովհաննէս Տէրգնցի և իր որդին, որոնք 1587 թւին տպել են «Սարմուսարան».

Այնուհետև հայերէն գրքեր ըսկսեցին լոյս տեսնել Եւրոպայի գանազան քաղաքներում, մանաւանդ Ամստերդամում (Հոլանդիա), և միայն 1640 թւին արպարանը մտաւ հայոց աշխարհին աւելի մօտիկ վայրը, Պարսկաստանի Սպահան մայրաքաղաքի մօտ հիմնւած հայաբնակ Նոր-Ջուղան: Այդտեղ Ամենափրկիչ վանքում ամենքը աշխտում էին այդ գործի վրա և՛ հոգևորականները, և՛ աշխարհականները, և՛

մարդկային միտքը տպագրական խօսքի միջոցով տարածւում է ամեն տեղ, թէ հարուստի ապարանքները և թէ աղքատի նկուղը:

Խրիմեան Հայրիկը, որ վերջը եղաւ Ամենայն Հայոց կաթողիկոս, առաջինն էր, որ Հայաստանի խորքը տարաւ տպարանական մամուլն ու տառերը: Վարագայ վանքում նա տպում էր իր «Արծիւ վաստուրականի» թերթը:

Սիմակ